**«ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ի Քարաբերդի հանքավայրի կենտրոնական տեղամասի արդյունահանման ժամկետի երկարաձգում**
**Հանրային չորրորդ լսման արձանագրություն**

«10» Նոյեմբերի 2025թ.

2025 թվականի նոյեմբերի 7-ին ժամը 14:00-ին ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Քարաբերդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Քարաբերդի ոսկու հանքավայրի կենտրոնական տեղամասի արդյունահանման ժամկետի երկարաձգման վերաբերյալ կազմակերպված հանրային լսում /չորրորդ լսում/:

*Մասնակցեցին՝*

Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը, Քարաբերդ բնակավայրի վարչական ղեկավար Յու. Շավելյանը, «ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները, «Գեոմիներալ» ՍՊԸ-ի տնօրեն Արկադի Մուխսի-Հովեյանը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Հերիքնազ Մկրտչյանը, նույն ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Քրիստինե Հարությունյանը, Փամբակի համայնքապետարանի ներկայացուցիչները, Քարաբերդի և հարակից բնակավայրերի բնակիչները, լրատվամիջոցների, հասարակական և բնապահպանական կազմակերպությունների ներկայացուցիչները, ազատ լրագրողները և բնապահպանները: (կից՝ մասնակիցների ցանկը, որը հանրային լսմանը ներկաներից ոչ բոլորը ստորագրեցին և տեսաձայնագրությունը):

*Զեկուցումներ՝*

Բացման խոսքով հանդես եկավ Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը.

**Փամբակ համայնքի ղեկավար**.

- Հարգելի՛ բնակիչներ, ողջունում եմ բոլորիդ, խնդրում եմ մի պահ լռություն պահպանեք, մեր նախարարության գործընկերների կողմից ներողություն եմ խնդրում, որովհետև մի փոքր ուշացել են՝ մեքենայի հետ կապված խնդիր կար, բայց շատ լավ էր, այդ ընթացքում բոլորն իրար հետ շփվեցին: Ուզում եմ ներկայացնել Ձեզ, որ այսօր հանրային լսում է իրականացվում Քարաբերդի ոսկու հանքավայրի հետ կապված, որ մեզ դիմել է ԱՍՍԱԹ ՍՊԸ-ն: ԱՍՍԱԹ-ին մենք բոլորս լավ ճանոթ ենք, որովհետև քանի տարի աշխատանքներ է կատարել համայնքում, գործունեություն ա ծավալել, համայնքին իրա ներդրումներն արել: Հիմա իրանց երեք դրական եզրակացություն, արձանագրություններ տվել ենք, հիմա իրանց չորրորդ հանրային լսումնա, խոսքը կփոխանցեմ մեր նախարարության ներկայացուցչին, իրան կլսենք, հետո երբ միտք կունենաք՝ խնդրեմ, ձեռք բարձրացրեք, ձայնի իրավունք տանք՝ դուք խոսեք:

**Հերիքնազ Մկրտչյան**.

- Ողջունում եմ բոլորիդ, ինչպես նշվեց Փամբակ համայնքի ղեկավարի կողմից, սա արդեն չորրորդ հանրային քննարկումն է: ԱՍՍԱԹ ՍՊԸ-ի կողմից շրջակա միջավայրի նախարարություն փորձաքննության ներկայացված Լոռու մարզի Քարաբերդի հանքավայրի կենտրոնական տեղմասի լիցենզիայի ժամկետի երկարաձգման նախագծայի փաթեթի փորձաքննման գործընացը շարունակում ենք:

Ինչպես նշվեց Փամբակ համայնքի ղեկավարի կողմից այս փաթեթի փորձաքննությունը սկսվել և իրականացվել է Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՕ-110-Ն ՀՀ օրենքի պահանջներից ելնելով: Շրջակա միջավայրի նախարարության կողմից տրամադրվել է տեխնիկական առաջադրանք, որով սահմանվել է Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության բովանդակությունը: Հարկ եմ համարում նշել, որ տեխնիկական առաջադրանքը տրվել է ամբողջ ընդերքօգտագործման համալիրի ստորգետնյա ինչպես նաև բացահանքի բոլոր ենթակառուցվածքների համար, սակայն ոլորտի լիազոր մարմին ՏԿԵ նախարարության կողմից հիմնավորվել է համապատասխան ձևով, որ այս փաթեթը պետք է ներկայացվի առաջնահերթ ստորգետնյա հանքավայրի լիցենզիայի երկարաձգման համար, հիմավորումները կան փաթեթում, և այս պահին շարունակվում է փորձաքննվել ստորգետնյա հանքի շահագործման աշխատանքները: Հարկ եմ համարում նշել, որ այս փաթեթի վերաբերյալ ծանուցումն իրականացվել է օրենսդրությանը համապատասխան: Ծանուցելով Փամբակ համայնքապետարանին մենք նաև այդ գրությամբ տեղեկացրել ենք, որ օրենսդրությանը համապատասխան ծանուցումն իրականացվի ինչպես նախաձեռնողին, այնպես էլ շահագրգիռ հանրությանը: Եվ ես կարծում եմ որ հավուր պատշաճի ծանուցումն իրականացվել է: Նշեմ նաև, որ մինչև ծանուցման գործընթացների իրականացնելը այս փաթեթը ուղարկվել է կարծիքների համապատասխա պետական մարմիններ, տարածքային կառավարման ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններին, ստացվել են դիտողություններ և առաջարկներ, շրջակա միջավայրի նախարարության մեր ՊՈԱԿ-ի մի շարք դիտողությունների հետ մեկտեղ հաշվետվությունն ուղարկվել է լրամշակման և այս լրամշակման հաշվետվության վերաբերյալ կազմակերպվել է այս հանրային քննարկումը: Այս հանրային քննարկման նպատակն է այս փուլում ձեր կարծիքները լսելը և մինչև գործընթացի ավարտ հաշվի առնվեն կամ որոշ կարծիքներ կամ պահանջներ ամրագրվեն փորձաքննական եզրակացությունում որպես փորձաքննական պահանջներ: Այսքանը իմ կողմից, հետո ընթացիկ հարցեր կուղղեմ ձեզ, մինչ այդ մինչև հարցերին տրամադրելը մենք խնդրենք ընկերության ներկայացուցիչների կողմից ներկայացնել համառոտ ՇՄԱԳ հաշվետվությունը, և ներկայացնելու ընթացքում հարցերը կուղղենք նախագծող կազմակերպությանը կամ ՇՄԱԳ մշակողին: Այսքանը իմ կողմից:

**Նախագծող ընկերության ներկայացուցիչ**

-Շնորհակալություն կարճ ներկայացնեմ նախագիծը այնուհետև խոսքը կփոխանցեմ մեր ՇՄԱԳ-ի մասնագետին: Քարաբերդի հանքավայրը գտնվում է Լոռու մարզում Բազումի լեռնաշղթայի հարավային լանջին՝ Փամբակ գետի ձախ ափին, դեռևս սովետական միության տարիներին սկսած 1967թ-ից ուսումնասիրություններ կատարվել են, վերջին անգամ 2006-2009 թթ ԱՍՍԱԾ ընկերությունն իրականացրել է երկրաբանահետախուզական աշխատանքներ, որի արդյունքում կազմվել է հաշվետվություն և լիազոր մարմնի կողմից հաստատվել են 1,6տ ոսկու 3տ արծաթի պաշարներ: Այնուհետև 2013թ ընկերությունը ստացել է շահագործման թույլտվություն և 2014-2024 թ իրականացրել է հանքավայրի շահագործումը բացառապես բաց եղանակով: Այնուհետև ժամկետը սպառվել է 06.06.2024թ-ին , այժմ ընկերությունը ցանկանում է թույլտվություն ստանալ մնացորդային պաշարները շահագործելու նպատակով: Այս անգամ ընկերութունը նախատեսում է բացառապես փակ եղանակով

շահագործել հանքավայրը, ինչպես նաև բացահանքում պահեստավորված հատվածը մշակել, մնացորդային պաշարները մոտ 1,5 տ ոսկի, 2,7տ արծաթ: Ընկերությունը նախատեսում է արդյունահանել օգտագործելով 3-րդ բովանցքը, նրա հարակից տարածքում նախատեսում է 581 քմ արդյունաբերական հրապարակ պատրաստել ,որտեղից բերվելու է հանքաքարը տեղավորվելու է այդտեղ, այդտեղից տեղափոխվելու է Վանաձորի երկաթգծային կայարան՝ մոտ 12 կ հեռավորության վրա, որտեղից էլ տեղափոխվելու է Արարատում գործող ֆաբրիկա կամ այլ ֆաբրիկա: Առկա պաշարներով ընկերությունը նախատեսում է ստանալ 30000 տ-ի արդյունահանման թույլտվություն, առկա պաշարներով հանքաքարը կբավարարի 9 տարի և ամբողջ աշխատանքների ավարտից հետո ընկերությունը նախատեսում է իրականացնել նաև ռեկուլտիվացիա: Ռեկուլտիվացիայի կենթակրվեն ոչ միայն այս 9 տարվա ընթացքում խախտված հողերը, այլ մինչև այդ խախտված հողերը նույնպես: Ընկերությունը բացի պետական վճարները բնապահպանակն վճարները և տուրքերը նախատեսում է նաև սոցիալական ծրագրեր իրականացնել: Արդեն բնապահպանական մասով գործընկերը կներկայացնի, թե ինչ գործառույթներ են կատարվել և ինչ վնասներ կունենանք և դրանց չեզոքացման վերացման շուրջ:

**ՇՄԱԳ մասնագետ**

-Բարև Ձեզ իմ անունը Արտակ է, փորձեմ համառոտ ներկայացնել ինչ է արվել, և այստեղ առանցքային մի բան նշեմ, ինչպես ասվեց շահագործումն իրականացվելու է փակ եղանակով, և մենք դա ենք հաշվի առել ՇՄԱԳ-ը իրականացնելու նպատակով: Իրականությունն այն է, որ փակ եղանակը մեզ հնարավորություն կտա էականորեն նվազեցնել շրջակա միջավայրի վրա բացասական ներգործությունը, այսինքն դա թույլ կտա մթնոլորտային արտանետումները սահմանափակել հանքում, ջրցանի և այլ գործողությունների արդյունքում այդ ամենը նստեցնել հանքում և կկատարվի ամբողջ արտանետումների 10 տոկոսը, դա էական գործոն է, ինչը մենք հաշվի ենք առել գնահատումն իրականացնելիս: Դա կարևոր է նաև կենդանական, բուսական աշխարհի և հողային ռեսուրսների համար քանի որ կբացառի դրանց ախտոտումը կամ այն կլինի նվազագույն: ՇՄԱԳ-ում ներկայացված է նաև թե հանքի շահագործման համար ինչքան ջուր կծախսվի, ինչքան կեղտաջուր պետք է առաջանա, ինչքան թափոն է առաջանալու՝ ընդերքօգտագործման և ոչ, այնտեղ յուղեր, դողեր: Ներկայացված է որտեղ է կուտակվելու, ուր է ուղարկվելու: Աղմուկի և թրթռումների վերաբերյալ ունենք բավական տարածություն հանքի և բնակավայրի միջև, այսինքն դա մարդկանց վրա չի ազդելու: Նաև ունենք մանրամասն ներկայացված գործողություններ շրջակա միջավայրի տարբեր՝ մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների, բուսական աշխարհի և այդ ամենի վրա նվազագույն ազդելու նպատակով և ընդհանուր գնահատման արդյունքում եկել ենք այնպիսի եզրահանգման, որ եթե այն ամենն ինչ նախատեսված է՝ իրականացվի, ապա մենք ունենում ենք շատ փոքր ազդեցություն և դրականորեն գնահատականը ընդահնուր ոչ բացասական է: Պետական մարմիններն էլ ուղարկել են տարբեր նախարարություններ, եկել են դիտողություններ, բոլորին պատասխանել ենք:

- Ես մի բան ասեմ, կներեք ես խնդրում եմ բոլորիդ էլ ձայն է հասնելու, հերթով առանց որևէ մեկին խանգարելու ձեր կարծիքները արտահայտվեք: Առանց երկրորդ անգամ միջամտելու:

**Օլեգ Դուլգարյան**

- Իմ խոսքը և հարցը բացառապես շրջակա միջավայրի նախարարությանն է ուղղված: Նայեք, այս տարիների ընթացքում այս համայնքը համընթաց կռիվների մեջ, տարբեր ընկերություններ ցանկանում են այստեղ պաշարներ որոնել, և տարբեր ընկերություններ ստեղծել են իրենց կողմնակիցների տարբեր խմբեր, և կան մարդիկ, որ դեմ են, բայց հիմնական կոնսենսուսը բոլոր խմբերի եղել է հետևյալը. որ մենք ունենք մի հատ բաց հանք, և այլևս հանքի ընդլայնում չենք ցանկանում ունենալ, այսինքն էդ բաց հանքը թե վերջացել ա` ռեկուլտիվացվի, թե չի վերջացել ` ավարտվի և այլևս որևէ հանքարդյունահանում տեղի չունենա: Դա մեկ հարցը, որը ես պետքա բոլոր ժամանակների մտքերը բերեմ այստեղ, պետքա` տեսանյութերով: Կապ չունի համայքնի ավագանին ինչա որոշում, էս համայնքի բնակիչները` չէ, պարոն Կոնստանդյան դուք եք տվել համաձայնություն, դե ուրեմն որպեսզի կոնկրետ հստակ խոսեմ մի խանգարեք: Էն որ պետքա գետնի տակով էդ պաշարները հանվի դա էլ հանքի ընդլայնումա: Այսինքն ստեղ կարող ա ասեն, որ ժամկետների մասին են խոսում, դա մենակ ժամկետ չի, դա նոր պաշարների հանումնա այն էլ փակ եղանակով: Եվ այստեղ շատ կարևոր ա շրջակա միջավայրի նախարարությունը ընդհանրապես տվյալ գրունտը գնահատելա՞, ինքը փակ եղանակի համար պիտանի ա թե ոչ: Այսինքն ստորգետնյա շահագործումը ինչ այլ հետևանքներ, պետք է ասել չէ մարդկանց, որ ստորգետնյա շահագործումը ևս իր վնասներն ունի, պետք է ասել թե ինչ վնասներ են դրանք: Դրաքն կարող են լինել հանքախորշերից դուրս եկող չկառավարվող ջրեր, դրաքն կարող են լինել աղբյուրներ` այ հենց էն մեծ աղբյուրը, բոլորը կանգնում ջուր են խմում, սայ էդ աղբյուրը ո՞վ ա ստուգել, ջրերը որտեղի՞ց են գալիս, ոչ մեկ չի ստուգել: Այսինքն էտ ուսումնասիրությունը շատ խորքային պետք` է կատարվի, դաշտային աշխատանքներով, այն էլ անկախ փորձագիտական խմբերի կոմղից, ոչ թե ասենք ընկերությունն ասի, նախարարությունն էլ ընդունի որպես օբյեկտիվ տեղեկատվություն: Եվ հաջորդը, էսքան տարիներին անընդհատ խոսել ենք, երբեք այդպես էլ Վանաձորը չճանաչվեց ազդակիր, էստեղ Վանաձորցիներ կան: Ասում են, էտ հանքը մենք ենք տեսնում Վանաձորից, Արցախ պուրակից, ի վերջո մեզ էլա վնաս տալիս, փոշիյա, աղմուկա: Որևէ ձև Վանաձորը ազդակիր չի ճանաչվել այդ ամբողջ ընթացքում: Այս լսումներ միանշանակ պետք է Վանաձորում էլ ընթանային: Անցյալ լսումներից մեկում ես հանքաբանական գիտությունների դոկտոր Պետրոս Ալոյանի աշխատությունն էի բերել, որտեղ ինքը նշում ա որ սա կոչվումա ուրանային գոտի: Տվյալ ընկերությունում խառնվեցին, նախարարությունից թուղթ բերեցին, որ չկա նման պաշարներ հաստատված, այսինքն չկա նման եզրակացություն որ այստեղ ուրան կա: Նախարարությունը չի ուսումնասիրել կամ չգիտի, բայց կա աշխատություն: Կցանկանամ, որ հերքեք որպես նախարարության ներկայացուցիչ Պետրոս Ալոյանին հերքեք, ասեք էս մարդը ճիշտ չի ասել, և այտեղ ուրան չկա և դրանով պրծնենք, խոստանում եմ այլևս հղումներն Պետրոս Ալոյանին չանել: Երևի թե այսքանը, շնորհակալություն:

**Բնակիչ 1**

- Մենք բոլորս դեմ ենք հանքի շահագործմանը:

Օլեգ Դուլգարյան

- Լավ եք անում:

**Բնակիչ 1**

-Մենք ստեղ հավաքվել ենք որ ասեն մենք ստեղ պիտի ապրենք, մեր երեխեքն էլ պիտի ապրեն, մենք դեմ ենք որ էս հանքը կոնկրետ, ֆսյո, ուրիշ տարբերակ չկա: Ուզումա ավագանին որոշի:

**Բնակիչ 2**

- Մենք դեմ ենք որ հանքը շահագործվի, շատ բան ստուգված չի , ջրերի հետ կապված մեզ վնասա, մեր երեխեքին, մենք ստեղ ապրում ենք, դեմ եմ, որ էտ հանքը աշխատի:

**Բնակիչ 3**

- Մենք գյուղացիներով դեմ ենք, որ հանքերը աշխատեն, իսկ եթե բաց հանքա ընդլայնում չպիտի լինի, բացի դրանից հիմա որ գնան աշխատեն, էդ մեքենեաները բարձեն, փոշին նստելուա մեր արոտավայրերի վրա, իսկ որ գումարը փոխանցում են մեր գյուղացիները ոչ մի կոպեկ օգուտ չեն տեսնում, ինչի՞:

**Բնակիչ 4**

- Ես ոչ թե ասենք համաձայն չեմ, համաձայն եմ, որ մարդիկ աշխատեն լայնացում չլինի: Էդքան բան: Էս գյուղի համար նրանք էնքան ունեն արած, որ տարիներ առաջ էդ հանքը շահագործվելա ոչ մեկ ոչ մի բան չի արել:

**Բնակիչ 5**

- Բոլորս էլ գիտենք, որ հանքի շահագործումը վնասակար ա, բայց մենք փոքր գյուղ ենք, լքված գյուղ ենք, Չեխերի կողմից որ հանքը շահագործվելա էս շենքը կառուցվելա պետքա ասենք դաբոռ Չեխերին:

**Օլեգ Դուլգարյան**

- Ես ուզում եմ տամ ինֆորմացիա, նախարարությունը, ներկայացուցիչը վստահ եմ որ տեղյակ է, ուղղակի ասեմ, որ Վանաձորը և Փամբակը հեսա կճանաչվեն զբոսաշրջային կլաստեռներ և այստեղ մեծ ներդրումներ են նախատեսվում իրականացնել, արդեն միջազգային բանկերից վարկեր են վերցվել: Ես ինքս իմ գործընկերոջ միջոցով տեսել եմ ինչպես են այդ բանկերի ներկայացուցիչներին Վայքի համայնքապետարանում քննարկումների ժամանակ հարց են տվել, Եղեգիսի, քանի որ Եղեգիսն էլա կլաստեռի մեջ մտնում, Եղեգիսի և հանքի գոյակցության մասին, պաշտոնապես այնտեղ պատասխանել են, որ դրանք անհամատեղելի են: Այսինքն եթե այնտեղ հանք բացվի մենք կհանենք Եղեգիսը զբոսաշրջային կլաստեռից: Այստեղ շատ կարևոր ա ընդգծել համայնքի զարգացման տեսլականը և ռազմավարությունը: Ի դեպ կարևոր ա առաջնորդվել, քանի որ էս երկու օրը Լոռու մարզպետը Լոռի թիվիում հարցազրույցի ժամանակ նշեց 2 բան. զբոսաշրջային կլաստեռների մասին, որ ներդրումներ են նախատեսվում, այդ թվում Փամբակ համայնքում և դրա համար ինքը չի ցանկանա այտեղ նոր տարածքներ տեսնել:

**Բնակիչ 6**

- Բացի այդ Փամբակ համայնքը ճանաչվելա զբոսաշրջային գոտի, երկու օր առաջ էդ օրենքի մասին քննարկում էր, և ընդունել էին: Պարոն Կոնստադյանը գիտի:

**Բնակիչ 7**

- Ողջունում եմ բոլորին, ես խոսում եմ որպես երկիր մոլորակի բնակիչ: Անձամբ ծնվել եմ Վանաձորում, Վանաձորի բնակիչ եմ բայց որպես երկիր մոլորակի բնակիչ եմ խոսում: Մի ընթացք նաև ռուսերեն կխոսեմ, որ մեր հյուրերը հասկանան: Եթե դեմ չեք, եթե կհասկանաք.

(թարգմանված) Մենք բոլորս բնության մասն ենք, անկախ ազգությունից, մեզնից յուրաքանչյուրը պետք է պահպանի բնությունը: Եթե դուք ուզում եք Հայաստանում լավ գործ անել, եկեք միասին կառուցենք տուրիստական կենտրոն: Որևէ հորատանցք

բացելը դա վերք է երկիր մոլորակի համար, այն ինչ գին ունի՝ ամենաէժանն է եղբայրներ, եկենք չվազենք ոսկու հետևից, քանի որ դեղին գույնը մեզ կուրացնում է և մեր հոգիները մեռնում են: Եկենք չթողնենք մեր հոգիներին միայն մատերիալ կյանքով ապրենք: Եկեք պահպանենք բնությունը քանի որ դրա մասն ենք: Այն ինչ հիմա կառուցել եք նրա արդյունքն է որ մենք չենք հարգում հողը, մեզ ամբողջ աշխարհում միավորում է հողը, մենք հողից ենք պատրաստված և վերջում հողի տակ հավասար ենք լինելու: Շնորհակալություն այն ամենի համար ինչ արել եք գյուղի համար:

**Դավիթ Մարաշեկ**

- (թարգմանված) Կներեք ես ևս կշարունակեմ ռուսերեն, իմ անունը Դավիթ Մարաշեկ է, ես չեխ եմ բայց ես էլ եմ հայ, մենք մեր թիմի հետ այստեղ աշխատում ենք արդեն մեկ տարի: Ես ձեզ հետ համաձայն եմ, մենք պետք է բնությունը հարգենք, դրա համար մենք այստեղ ենք եկել Չեխիայից փորձով՝ Իռլանդիայից, Չինաստանից և առաջարկում ենք շատ հստակ աշխատող քաղաքականություն, կանաչ նախագիծ: Հայաստանը կախված է օգտակար հանածոներից .......(խոսքն ընդհատում են, նշելով որ կախված չէ)

**Քարաբերդի վարչական ղեկավար**

- Երկու բան կասեմ, նախկինը մենք նորից մարդկանց թույլ ենք տվել, հիմնարկություն կար, որ դիմել էր արևելյան և արևմտյան կողմերի շահագործման համար, մենք թույլտվություն տվել ենք, մենք համաձայն ենք որ իրենք իրար հետ համագործակցեն, եթե իրար հետ համագործակցեն մեզ համար շատ լավ կլինի: Ես կողմ եմ, միշտ աջակցել եմ, ճիշտը նայա որ երկու ընկերություն միասին աշխատեն:

**Հերիքնազ Մկրտչյան**

- Ես ուզում եմ նշել, որ մենք պիտի տարանջատենք գոյություն ունեցող գործունեությունը և ընթացիկ բացահանքի կամ ստորգետնյա հանքի, ընդլայնում չի, ժամկետի երկարաձգումա, եկենք մենք դիտարկենք այս պարագայում և մեր կարծիքները հայտնենք այս պարագայում: Քանի որ օրենսդրությունն էլ է ասում եթե ներկայացվում է փաթեթ, այդ փաթեթում պիտի հաշվի առնվեն օրենսդրական նվազագույն պահանջները, եթե իրականացվում է ժամկետի երկարաձգում, ընդերքի մասին օրենսգրքում հստակ գրված է: Դրա համար կարծիքը ձերն է, թեկուզ 4-րդ քննարկում՝ որոշողը դուք եք, հարգելի բնակիչներ: Բայց ես ուզում եմ փոխըմբռնման մթնոլորտում ձեր կարծիքները ներկայացնեք, եթե ունեք հիմնավոր առաջարկություններ, ձեր հիմնավոր առաջարկները գրեք և մենք կդիտարկենք հիմնավոր առաջարկությունների դեպքում մերժենք կամ բացասական եզրակացություն տանք: Բայց ձեր հիմնավորումը պիտի լինի բնապահպանական: Մենք պատրաստ ենք հաշվի առնել եթե կներկայացնեք բնապահպանական հիմնավորումներ, որ սա տրված լիցենզիայի սահմաններում, նախկինում բացված արդեն ենթակառուցվածքները գործող ստորգետնյա հանքա: Այս պահից ստորգետնյա հանքն ենք դիտարկում:

**Բնակիչ 8**

- Հարց կարելիա՞, մեր գործընկերը նշեց տեքստի մեջ, նախկինում բացառապես բաց տարբերակով շահագործվող հանք է եղել մինչև 2024 թ: Հիմա դուք ասում եք ընդլայնում չկա: Կարծում եմ դա բոլորի աչքին թոզ փչել է, չգիտեմ գուցե վիրավորվեք դրանից: Երկու լիազոր մարմինները ևս թոզ են փչում մարդկանց աչքերին: Որովհետև եթե ես փորեմ այս գետինը և իջնեմ մի հարկ ներքև, դա ընդլայնում ա, թե՞ չէ:

Փաստացի տեղի ա ունենում ընդլայնում սիրելի ժողովուրդ, ու ես չեմ հասկանում թե մինչև հիմա ինչի Վանաձոր համայնքը՝ ես Վանաձորի բնակիչ եմ, մինչև հիմա եթե ուղիղ գիծը հանենք 3 կմ հեռավորություն է, ինչու պիտի Վանաձորի բնակիչը չկարողանա իր կարծիքը արտահայտել այս խայտառակության շուրջ, և ինչու պիտի միայն բնակավայրի բնակիչները, ամենայն հարգանքով բոլորի հանդեպ, բայց մենք գիտենք թե Հայաստանում ինչպես են տարիներ շարունակ լուծվել նման հարցերը, մենք շատ լավ գիտենք ինչպես են ճնշվում մարդիկ, ինչպես են իրենք իրենց չքավոր կյանքից ելնելով խաբվում օրինակ այս շենքով և ասում, որ Չեխերը որևէ լավ բան են արել համայնքի համար: Ես չեմ կարծում որ որևէ մեկը պիտի մի շենքով, լուսավորությամբ, էլեկտրականությամբ...: Ժամանակին պետք էր մտածել որ նման հանքարդյունաբերական ապագան ձեր համայնքը կործանում ա: Հիմա իմ հարցը հետևյալն ա , ինչու մինչև հիմա Վանաձորը չի համարվում ազդակիր քաղաք, ինչու մինչև հիմա 80000 բնակիչներից կարծիք չեք հարցնում: Որովհետև ես վստահ եմ էն դիմադրությունը որ դուք էստեղ եք տեսնում, կրկնակի եռակի Վանաձորում եք տեսնելու: Սա խայտառակ նախագիծ և սա չպիտի իրականացվի:

**Ս. Կոնստանդյան**

- Ժողովուրդ ջան, ովքեր ունեն տվյալ հանքի ընդլայնման կամ գործունեության հետ կապված, կարող եք դիմել ՏԿԵ նախարարություն, իմանալ թե ինչ գործունեություն է իրականացվում: Եվ տեղեկացնեմ, որ սա ոչ թե հանքի ընդլայնում ա, այլ ժամկետի երկարաձգում:

**Օլեգ Դուլգարյան**

- Ես և հարցադրումներ նշեցի, և մտահոգություններ արտահայտեցի, և կոնկրետ հարց ինչու Վանաձորը ..: Առաջարկ ունեք, անկախ ամեն ինչից Վանաձորը դիտարկել ազդակիր:

**Հերիքնազ Մկրտչան**

- Պարոն Օլեգ, դուք կարող էիք 3-րդ հանրային քննարկման ժամանակ ասեիք՝ ձեր գործունեությունը չի համապատասխանում, իսկ հիմա արդեն ՝ 4-րդ հանրային քննարկման ժամանակ ուշ է ձեր դիտարկումների համար:

**Ս. Կոնստանդյան**

- Ժողովուրդ ջան, կարող եք գրավոր դիմել ՏԿԵ նախարարությանը, մենք 3 անգամ հանրային լսում անց ենք կացրել էս արդեն 4-րդ հանրային լսումնա, բոլորիս կարծիքները գիտենք: Խաղաղության մեջ եղեք: Նախարարությունը գնա իր որոշումը կայացնի:

**Բնակիչ**

- Դուք սպառել եք ոսկու հիմնական ծավալը, վերջացելա լիցենզիան, դուք ունեք քարհանքում և հողի մեջ որոշակի մնացորդային պաշար ոսկու, խնդրում եք ժամանակ դա ևս արդյունահանելու համար, ճի՞շտ է: Հիմա երբ ժամկետն ավարտվում է, պետք է իրականացնեք ռեկուլտիվացիա, վերացնեք վնասները ճիշտ է՞: Խնդրում եք հիմա ժամանակ, որ ոչ թե հիմա, այլ 9 տարի հետո վերացնեք վնասները : Հիմա վերացրեք վնասները նոր հետո եկեք նոր նախագծով գուցե : Գուցե այդ ժամանակ Քարաբերդը կամ Փամբակը լինի Վանաձորի մաս, և մենք կհանդիպենք Վանաձորում՝ շատ ավելի մարդկանցով, շատ ավելի բազմազան կարծիքներով:

**Նախագծող ընկերության ներկայացուցիչ**

- Տեսեք ես հիմա նախագծող ընկերության ներկայացուցիչն եմ, կոնկրետ ԱՍՍԱԹ-ին պետք է դիմեք էս հարցով: Բայց այդ 9 տարում ռեկուլտիվացնելու են ոչ միայն իրենց կատարած աշխատանքները, նաև նախորդ աշխատանքները: Տեսեք միանշանակ ներկայացվում ա, որ ընդլայնում ա տեղի ունենում, բայց եղած պաշարները փակ եղանակով է նախատեսվում շահագործել, ինչը զգալի ավելի քիչ վնասներ է առաջացնում: Տեսեք ամեն ինչ էդքան պարզ չի , ինչ վնասներ է բերում, անցնում է պետական փորձաքննություն: Վնասների մեծ մասը աբողջությամբ չեզոքացվում է, մի մասը մեղմվում է: Ցանկացած ոլորտի գործունեություն բնությանը վնաս է տալիս: Միանշանակ անհնար ա նենց աշխատել: Դուք ձեր մեքենայով էստեղ գալով էլ բնությանը վնաս եք տալի: Հիմա ընկերությունը դա է նախատեսում, 40 աշխատատեղեր են ստեղծելու, ներդրումներ է կատարելու, սոցիալական ծրագրեր ա իրականացնելու:

**Բնակիչ**

- Իսկ վերջին տարիներին քանի աշխատատեղ բնակավայրի համար ստեղծե՞ց:

**Նախագծող ընկերության ներկայացուցիչ**

- 9 տարի հետո՞

**Բնակիչ**

- Չէ, նախորդ տարիներին:

**Նախագծող ընկերության ներկայացուցիչ**

- Դե ես հիմա նախորդի մասին չեմ խոսում քանի որ սահմանափակ է իրականացվել. Դուք ասում եք մեծ մասն արդյունահանվել է բայց ես թվերը ներկայացրեցի, դուք հասկացեք, որ շատ չնչին մասն է արդյունահանվել: Տեսեք թող չստացվի, որ բոլորդ լավն եք ցանկանում, մենք՝ վատը: Եթե դեմ եք, կոնկրետ ասեք դեմ եք ու ինչի համար:

**Բնակիչներ**

- Փոշիա լինելու

**Նախագծող ընկերության ներկայացուցիչ**

- Կա ձև չեզոքացնելու:

**Կոնստանդյան**

- Ժողովուրդ ջան, բոլորիդ լսեցինք: Ովքեր ունեն առաջարկություններ գրավոր կարող են ներկայացնել նախարարություն: Լսումները համարենք ավարտված:

Հանրային լսման վարող,

Փամբակ համայնքի ղեկավար Ս. Կոստանդյան

Քարաբերդ գյուղի վարչական ղեկավար՝ Յու. Շավելյան

«ԱՍՍԱԹ» ընկերության տնօրեն՝

«ԱՍՍԱԹ» "ACCAT" "ASSAT" 03807664